ԱՄԱՆՈՐԸ ՍԵՎԱՆԻ ՎԱՉԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑՈՒՄ

Հունվարի 13-ին՝ Հիսուս Քրիստոսի անվանակոչության տոնի օրը, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի նորակառույց մասնաշենքում տեղի ունեցավ դպրանոցի ամանորյա հանդիսությունը:

Առավոտյան Սևանի Ս. Առաքելոց եկեղեցում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Մայր Աթոռի միաբան և դպրանոցի նախկին սան Տ. Հովակիմ աբեղա Մանուկյանը: Հայր Սուրբը սրբազան արարողության ընթացքում հավուր պատշաճի քարոզ խոսեց՝ անդրադառնալով օրվա խորհրդին:

Այնուհետև դպրանոցի նորակառույց մասնաշենքում տեղի ունեցավ ամանորյա հանդիսությունը: Այն սկսվեց «Հայր մեր»-ով, Հայաստանի Հանրապետության օրհներգով և Վազգենյան Հոգևոր Դպրանոցի հիմնով: Ներկաներին ողջունեց Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի տեսչի պաշտոնակատար Տ. Մկրտիչ աբեղա Պռոշյանը՝ անդրադառնալով Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Ծննդյան խորհրդին՝ հորդորելով վազգենյանցիներին՝ առավել ջանասիրությամբ ու նվիրումով լծվել մեր Եկեղեցու պայծառացման ու զորացման գործին:

Ներկաների հետ իրենց մտածումներն ու մտահոգությունները կիսեցին նաև Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանը, Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպիսկոպոս Աջապահյանը և դպրանոցի դասախոս Պետրոս Բեղիրյանը, իսկ Արագածոտնի թեմում Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայացուցիչ Տ. Թորգոմ աբեղա Տոնիկյանն անդրադարձավ դպրանոցի անցած ուղուն:

Վերջում ներկաներին իր բարեմաղթանքներն ու օրհնությունը հղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հայոց Հայրապետն իր ուրախությունը հայտնեց, որ Վազգենյան Հոգևոր Դպրանոցն արդեն կայացած կրթական հաստատություն է, որի շրջանավարտներից շատերը, որպես ձեռնադրյալ հոգևորականներ, իրենց ծառայությունն են այսօր բերում Հայոց Եկեղեցու անդաստանում: Նա հույս հայտնեց, որ վազգենյանցիներն իրենց աներեր հավատքով, նվիրյալ ծառայությամբ ու գալիքի նկատմամբ պայծառ հույսերով շարունակողները պիտի լինեն մեր նախնիների սուրբ հավատքի՝ կերտելով մեր Եկեղեցու վաղվա օրը:

«Վստահ ենք, որ տարեցտարի այս թիվն ավելի պիտի մեծանա, և այս հաստատությունը կարևորագույն կրթական օջախներից մեկը պիտի լինի մեր Առաքելական Սուրբ Եկեղեցու: Այստեղից պիտի հասնեն ավելի մեծ թվով եկեղեցականներ, որոնք պիտի գան լրացնելու բացը, պակասը մեր եկեղեցականաց դասի, ինչպես նաև իրենց աշխատանքով, նվիրյալ ծառայությամբ պիտի զորացնեն մեր Սուրբ Եկեղեցին և բավարարեն հոգևոր կարիքները մեր հավատավոր ժողովրդի»,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

Ավանդույթի համաձայն, ընթերցվեցին նաև ամանորյա կաղանդչեքեր: Գեղարվեստական հայտագրով հանդես եկավ դպրանոցի երգչախումբը:

Հանդիսությանը ներկա էին թեմական առաջնորդներ, Մայր Աթոռի միաբաններ, դասախոսներ և հյուրեր:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ